

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱԿՏՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ և ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱև ԱՅՐ ԺԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՊԱՐՍՊՈՂ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐԻ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2024/150**

ք. Երևան

«29» 11 2024 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մեքուղական արգելափակոցների) պահպանման աշխատանքները կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ: Յուրաքանչյուր ամիս ներկայացված կատարողականին համամասնորեն որակավորման ապահովման գումարը ենթակա է նվազեցման:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ յուրաքանչյուր ամիս մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **3 /երեք/ օրինակ** (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **223 600 620** (երկու հարյուր քսաներեք միլիոն վեց հարյուր հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2024 թվականի համար կազմում է **27 954 551** (քսանյոթ միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Պայմանագրի արժեքը գործնալին է և կարող է փոփոխվել կախված սպասարկվող ճանապարհների երկարության, ճանապարհների վիճակի, ճանապարհների պահպանման մակարդակի փոփոխության հետ, բացի այդ յուրաքանչյուր տարի կողմերի համաձայնությամբ պայմանագրի արժեքի կարող է վերանայվել կախված:

նախորդ տարվա պաշտոնապես հրապարակված միջին գնաճից՝ տվյալ տարվա համար նախատեսված հատկացումների շրջանակներում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ ջնդուներվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված յուրաքանչյուր թերության վերացման համար սահմանված ժամկետի խախտման համար գանձվում է տուգանք՝ նույն հավելվածի 4-րդ աղյուսակով սահմանված չափով և տույժ՝ թերության վերացման համար 3-րդ աղյուսակում սահմանված ժամկետի ուշացված յուրաքանչյուր օրվա համար՝ սպասարկվող ճանապարհահատվածի 1 կմ արժեքի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Պայմանագրով, պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.9 Եթե Կապալառուն երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում, ապա Պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒՃԻ ԱՁՂԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անսխալագիտարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, երդնիցը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած առհասարակ իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին ելքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետում սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ ֆինանսական հատկացումների նվազեցման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած սուբստավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված միակողմանի լուծելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին: 7.12 Պայմանագրի կատարման օրվանից ճազած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 6 կետից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրան հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ նույնիսկ պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների կողմից տուժանքի ձևով ներկայացված որոշումներում և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին կետակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հուշարակ դնալու պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.13 Հաշվի առնելով կուտակված մեծածախ աշխատանքների առկայությունը, ինչպես նաև կանոնավոր պահպանման համար նախատեսված ծախսերից ազդեցություն ունեցող աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը՝ ձմեռային և ամառային ընթացիկ պահպանման ժամանակահատվածների համար կիրառել աշխատանքների միավորի արժեքների փոփոխություն՝ պայմանագրի ընդհանուր գինը հավասարաչափ բաշխելով ըստ ամիսների:

Աշխատանքների համար նախատեսված ամսական վճարումները իրականացնել ներքոնշյալ աղույսակի համաձայն՝

2024թ	Նոյեմբեր	$2/9+U/24+U*0,0294$
	Դեկտեմբեր	$2/4,5+U/12+U*0,0584$
2025թ	Հունվար	$2/4,5+U/12+U*0,0584$
	Փետրվար	$2/4,5+U/12+U*0,0584$
	Մարտ	$2/4,5+U/12+U*0,0584$
	Ապրիլ	$U/12+U*0,737/7,5$
	Մայիս	$U/12+U*0,737/7,5$
	Հունիս	$U/12+U*0,737/7,5$
	Հուլիս	$U/12+U*0,737/7,5$
	Օգոստոս	$U/12+U*0,737/7,5$
	Սեպտեմբեր	$U/12+U*0,737/7,5$
	Հոկտեմբեր	$U/12+U*0,737/7,5$
	Նոյեմբեր	$U/24+U*0,737/15$

որտեղ՝


Ձ- ընթացիկ ձմեռային պահպանման ընթացքում գումարն է

Ա- ընթացիկ ամառային պահպանման ընթացքում գումարն է

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետության
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Քյավատ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2500011209980100
ՀՎՀՀ 08420926
Տնօրեն՝ Ա. Սարգսյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
 դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական և բնութագիրը	Աշխատանքի				կատարման	
			չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	45231176/91	Ստորև	դրամ	223 600 620	223 600 620	1	Ստորև	2024 թվականի նոյեմբերի 16-ից մինչև «ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2024/150» ծածկագրով գնման ընթացակարգի մասով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելուն և դրա արդյունքում պայմանագրի կնքվելուն հաջորդող օրը

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ,
 ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ**

Ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների գնման պայմանագրի գործողության վերջնաժամկետ սահմանվում է 2024 թվականի նոյեմբերի 16-ից մինչև «ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2024/150» ծածկագրով գնման ընթացակարգի մասով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելուն և դրա արդյունքում պայմանագրի կնքվելուն հաջորդող օրը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ձեռքբերման

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները կապալառուն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, ինչպես նաև սպասարկման աշխատանքների կատարման ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի, շինարարական նորմերի, ստանդարտների պահանջները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կապալառուն պարտավոր է ապահովել ավտոմոբիլային ճանապարհների, ճանապարհային կահավորանքի պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկավաճ ժամանակ տրանսպորտի շտրջորյա անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

Ավտոմոբիլային ճանապարհների, առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների ընթացիկ պահպանման աշխատանքների ընթացքում երթևեկության կազմակերպման անվտանգության բարելավման նպատակով կապալառու կազմակերպությունը պատասխանատուի հանձնարարությամբ, տեղադրում է լրացուցիչ կահավորանքի միջոցներ:

Ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով կապալառու կազմակերպությունները բնակավայրերից դուրս գտնվող հատվածներում իրականացնում են նաև գլխավոր ճանապարհի հետ հատվող երկրորդական ճանապարհների վրա՝ մինչև 50 մ երկարությամբ հատվածում տեղադրված ճանապարհային նշանների պահպանման աշխատանքները՝ երթևեկության անվտանգության պահանջներին համապատասխան:

Ասֆալտը պարվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման ընթացքում կապալառուն պարտավոր է նաև՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
 - Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
 - Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
 - Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
 - Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկայես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ
 - Ստեղծել շտրջորյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին: Եղանակային պայմանների կտրուկ փոփոխության դեպքում պարբերաբար տեղեկացնել ճանապարհների վիճակի մասին:
 - Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանոր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

Ցեմենտը պարվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

Ցեմենտբետոնե պատվածքի հնարավոր քայքայումը կանխելու նպատակով անհարաժեշտ է հնարավորինս նվազագույնի հասցնել աղի քանակը, ինչպես նաև աղի և ցեմենտբետոնե ծածկի շփման ժամանակահատվածը:

Ձյան շերտը պետք է մաքրել և հեռացնել, երբ ձյան շերտի հաստությունը ավելին է 3-4 սմ-ից:

Ձյունը պետք է մաքրել այնուիսի ծյունամաքրիչով, որը համարված է ռետինե պաշտպանիչ շերտով:

Աղավազային խառնուրդով մշակելուց հետո պետք է իրականացնել երթևեկելի մասի և կողնակների ճնամաքում՝ կանխելով աղային ձյան լճացումը և ապահովելով աղաջրի լայնական ջրահեռացումը:

Մերկասառույցի մշակումը աղալվազով պետք է իրականացնել ճանապարհի 1 քմ.-ին աղավազի խառնուրդում մինչև 25 գրամ աղ հաշվարկով: Ճանապարհի ծածկի ձյան շերտի առկայության ժամանակ անհրաժեշտ է օգտագործել աղավազային խառնուրդ, որտեղ աղի պարունակությունը կկազմի մինչև 5%:

Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման ընթացքում կապալառուն պարտավոր է նաև՝

• Ճանապարհների պահպանության և երթևեկության անվտանգության պահանջների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝

- Հողային պաստառ և օտարման շերտ
- Երթևեկելի մաս
- Արհեստական կառույցներ

- Կահավորանք և անվտանգության էլեմենտներ, այդ թվում մետաղական արգելափակոցներ

• Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

Սպասարկման աշխատանքների ընթացքում՝ գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS) ստացված տվյալների փոխանցման պահանջները

Կապալառուի սպասարկման աշխատանքներում ընդգրկված՝ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) 53-րդ կետում նշված մեքենա-սարքավորումները պետք է կահավորված լինեն գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS): Կապալառուն պետք է ապահովվի, որ գլոբալ տեղորոշման համակարգով ստացվող տվյալները ծրագրային մակարդակով պայմանագրի ողջ ընթացքում փոխանցվեն «Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման» համակարգին՝ հետևյալ պահանջներին համապատասխան՝

Հաճախորդի GPS համակարգը պետք է ստանա ճանապարհահատվածները ըստ սպասարկող կազմակերպությունների, ընդ որում ճանապարհահատվածները ստանալու են հետևյալ տրամաբանությամբ՝

Հարցման դեպքում հաճախորդի GPS համակարգին հետ է վերադարձվելու համակարգով սպասարկողին կցված ճանապարհահատվածները, որպես կողողինատների զանգված, իրենց id-ներով: Նաև պետք է հետ վերադարձվեն կցված ճանապարհահատվածի սկզբից նախորդ հատվածը և վերջից հաջորդ հատվածը, նույնպես կողողինատների զանգվածի և id-ների տեսքով: Հարկավոր է api-ով սպասարկողներին ուղարկվել ճանապարհահատվածները, որպես կողողինատների զանգված, իրենց id-ներով:

Նկարագրված գործառույթը պետք է իրականացվի ամեն օր job-ով:

Կապի նախարարության համակարգը պետք է հետ վերադարձնի՝

1. Տվյալ պահին ճանապարհի վրա աշխատող մեքենաների դիրքը:



Մեքենաների աշխատելու մասին ինֆորմացիան նախատեսվում է մեխանիկական անջատիչի միջոցով կամ bluetooth սարքի միջոցով:

2. Ճանապարհի մաքրված հատվածները՝ այն հատվածներն են, որոնց վրա կատարվել է աշխատանք: Մաքրված հատվածների մասին ինֆորմացիան հետ ենք ստանալու ըստ

• ուղարկված ճանապարհահատվածների id-ների:Եթե տվյալ հատվածի 70 - 80 տոկոսը մաքրված է, համարում ենք, որ հատվածը մաքրած է:

3. Տվյալ պահին մեքենաների գտնվելու վայրը:



Հետ վերադարձվող տվյալներն են՝

- Մեքենայի id և պետ. համարանիշ
- GPS server-ի ամսաթիվ / ժամը
- GPS սարքի ամսաթիվ / ժամը
- Կորդինատները:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԵՐԸ

Կապալի պայմանագրի գործողության ողջ ընթացքում կապալառուն պետք է ապահովվի Կարգի 53-րդ կետի աղյուսակում նշված ստորև թվարկված մեքենա-սարքավորումների քանակին, տեսակին, կահավորանքին ներկայացվող սպահանջները, ինչպես նաև ապահովվի նշված մեքենա-սարքավորումների 70 տոկոսը սեփականության իրավունքով տնօրինելու պահանջը:


Կապալի պայմանագրի գործողության ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ մեքենա-սարքավորումներն են՝

NN	Անվանումը	Պահանջվող քանակը	Սեփականության ձևը
1	Գրեյդեր կամ այլ ձյունաքրիչ մեքենա (ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված ռետինե պաշտպանիչ շեղբով ու փոշեցիրով և գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> ընթացիկ ձմեռային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 40 կմ և յուրաքանչյուր հաջորդ 21-40 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
2	Կոմբինացված ճանապարհափին մեքենա (ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված ձյունաքրիչ սարքավորմամբ՝ վերազինված ռետինե պաշտպանիչ շեղբով և փոշեցիրով, ազդակալային խառնուրդի շաղացիր սարքավորմամբ և գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> ընթացիկ ձմեռային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 40 կմ և յուրաքանչյուր հաջորդ 21-40 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
3	Ինքնաթափ բեռնատար մեքենա, կահավորված գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 30 կմ և յուրաքանչյուր հաջորդ 16-30 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
4	Ամբարձիչ	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 100 կմ և յուրաքանչյուր հաջորդ 51-100 կմ համար -1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
5	Կոմպրեսոր	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: <u>Նվազագույնը՝</u> պահպանմանը հանձնվող	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված

		ճանապարհահատվածի յուրաքանչյուր 50 կմ և յուրաքանչյուր հաջորդ 26-50 կմ համար - 1 միավոր	
6	Գլորն (> 5 տ)	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 50 կմ և յուրաքանչյուր հաջորդ 26-50 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված
7	Գրեյդեր (ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածի համար), կահավորված գլոբալ տեղորոշման համակարգով (GPS/GLONASS):	Որոշվում է պահպանվող ճանապարհահատվածի երկարությունից ելնելով: Նվազագույնը՝ ընթացիկ ամառային պահպանմանը հանձնվող ճանապարհահատվածի յուրաքանչյուր 60 կմ և յուրաքանչյուր հաջորդ 31-60 կմ համար - 1 միավոր	Սեփական կամ վարձակալած կամ անհատույց օգտագործման հանձնված

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Նախնական տեղադրման և
ենթակառուցվածքների նախարարություն
«Ք.Երևան, Կառավարական տուն 3,
«Կենտրոնական գանձապետարան
«Ղ 900011012136
«ՎՎՎ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան



ԿԱՏԱՐՈՂ

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
«Վ, Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Ազատության 41/5
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2500011209980100
«ՎՎՎ 08420926
Տնօրեն՝ Ա. Սարգսյան



Աշտարակի տարածաշրջան
2024 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ

1	2	3	4	5	6	7	8	9
Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի արկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածներ	Սպասվող հատվածների երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ								
Մ1, Երևան-Գյումրի-ՀՀ սահ, կմ 14,4-կմ 29,8	Միջպետական I	15,40		Լավ		15,40	415,206	6394,172
Մ1, Երևան-Գյումրի-ՀՀ սահ, կմ 29,8-կմ 40,2	Միջպետական II-IV	10,40		Լավ		10,40	313,038	3255,595
Պոռշյանի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,48		Լավ		0,48	313,038	150,258
Աշտարակ-Փարզիի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,89		Լավ		0,89	313,038	278,604
Աշտարակի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,96		Լավ		0,96	313,038	300,156
Աշտարակ-Ապարան տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	1,56		Լավ		1,56	313,038	488,339
Աշտարակ-Բյուրական տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	3,80		Լավ		3,80	313,038	1189,544
Մ3, ՀՀ սահման-Մարզաբա-Վանաձոր-Swշիր-ՀՀ սահման կմ 28,5-կմ 35,5 կմ 39,5-կմ 53,3	Միջպետական II-IV	20,80		Լավ		20,80	313,038	6511,190

Հ19, Աշտարակ-Օշական-Մ3 կմ 0-կմ 8,8	Հանրապետական II-IV	8,80		Միջին		8,80	179,388	1578,614
Հ20, Մ1- Ագարակ-Բյուրական-Մ3 կմ0 - կմ 27,0	Հանրապետական II-IV	27,00		Միջին	կմ 0-կմ 14,5	14,50	179,388	2601,126
Հ27, Հ-20 - Ամբերդի պատմական հուշարձանին կմ0-կմ 10,0	Հանրապետական II-IV	10,00				0,00		0,00
Հ86, /Մ1-Արձը-Տեղերի պատմական հուշարձանին կմ0-կմ10,5	Հանրապետական II-IV	10,50		Միջին		10,50	179,388	1883,574
Հ56, Մ3-Մուղի-Օհանական կմ 0-կմ 5,3	Հանրապետական II-IV	5,30		Լավ		5,30	230,769	1223,076
Հ57, Մ3-Արտաշատի-Սարճուսական կմ 0-կմ2,0	Հանրապետական II-IV	2,00		Լավ		2,00	230,769	461,538
Ընդամենը		117,89				95,39		26316,148

Պահպանման ժամանակաշրջանը՝ ՓԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ

Մ1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման կմ 14,4-կմ 29,8	Միջպետական I	15,40	Երաշխ. ՄԵ (0)	Լավ		15,4	923,076	14215,370
Մ1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման կմ29,8-կմ40,2	Միջպետական II-IV	10,40	Բավարար ՄԲ(II)	Միջին		10,40	1958,715	20370,636
Պողոտանի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,48	Բավարար ՄԲ(II)	Միջին		0,48	1958,715	940,183
Աշտարակ-Փարբի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,89	Բավարար ՄԲ(II)	Միջին		0,89	1958,715	1743,256
Աշտարակի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,96	Բավարար ՄԲ(II)	Միջին		0,96	1958,715	1880,366

Աշտարակ-Ապարան տրանսպարտային հանգույց	Միջպետական II-IV	1,56	Երաշխ. ՄԵ (0)	Լավ		1,56	635,877	991,968
Աշտարակ-Քյուրական տրանսպարտային հանգույց	Միջպետական II-IV	3,80	Բավարար ՄԲ(II)	Միջին		3,80	1958,715	7443,117
Մ3, ՀՀ սահման-Մարզար-Վանաձոր-Sաշիր-ՀՀ սահման կմ 28,5- կմ35,5 և կմ39,5- կմ 53,3	Միջպետական II-IV	20,80	Երաշխ. ՄԵ (0)	Լավ	կմ28,5-կմ35,5և կմ39,5-կմ45,3	12,80	635,877	8139,226
			Լավ ՄԼ(I)	Լավ	կմ45,3-կմ 53,3	8,00	1231,362	9850,896
Հ19, Աշտարակ-Օջական-Մ3 կմ 0-կմ 8,8	Հանրապետական II-IV	8,80	Լավ ՀԼ(I)	Լավ		8,80	1073,952	9450,764
Հ20, Մ1-Ագարակ-Քյուրական-Մ3 կմ 0-կմ 27,0	Հանրապետական II-IV	27,00	Բավարար ՀԲ(II)	Բավարար	կմ 0-կմ 14,5	14,50	1689,039	24491,066
Հ86, /Մ-1/ Աղբ-Տեղերի պատմական հուշարձանին կմ0- կմ10,5	Հանրապետական II-IV	10,50	Բավարար ՀԲ(II)	Բավարար		10,50	1689,039	17734,910
Հ27, Հ20- Ամբերի պատմական հուշարձանին կմ0-կմ 10,0	Հանրապետական II-IV	10,00	Բավարար ՀԲ(II)	Բավարար		10,00	1689,039	16890,390
Հ56, Մ3-Մուղնի-Օհանական կմ 0-կմ 5,3	Հանրապետական II-IV	5,30	Բավարար ՀԲ(II)	Բավարար		5,30	1689,039	8951,907
Հ57, Մ3- Արտաշատ-Սարդուսական կմ 0-կմ2,0	Հանրապետական II-IV	2,00	Բավարար ՀԲ(II)	Բավարար		2,00	1689,039	3378,078
Ընդամենը		117,89				105,39		146472,133

Մետաղական արգելակակցների պահպանում

Տարածաշրջանի անվանումը	Ընդհանուր երկարությունը	/ 1000 գմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
Աշտարակի տարածաշրջան	37,306		1362,042	50812,339
Ընդամենը մետաղական արգելափակոցների պահպանում				50812,339
Ամբողջ	Աշտարակի տարածաշրջանով /ձմեռ, ամառ և մետաղական արգելափակոց/			223 600,620

1 տեխնիկական կադրի միջափետրական նշանակության ավտոմոբիլային ճանապարհինքի սպասարկման արժեքի գնագոյացում
 (Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՍՏՈՒ- ԱՇՈՒՆ)

Ավտոմոբիլային կիճակը (Շանկագիր)	Տարվա կտրվածքով (դրամ)				Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Քակարտ պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	
Երաշխեքային ՄԾ	923076				
Լավ ՄԼ	1714878	1659933			
Քակարտ ՄԲ		2581821	2483217		
Վատ ՄԿ					-----

II-IV տեխնիկական կարգի միջավետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄՍՈՒ- ԱՇՈՒՆ)

Ավտոճանապարհի վիճակը (Շաժվագիր)	Տարվա կտրվածքով (դրամ)			
	Լավ պահպանման նակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին պահպանման նակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Քակարար պահպանման նակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Թույլատրելի պահպանման նակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
Երաշխեային ՄԵ	635877			
Լավ ՄԼ	1231362	1176714		
Քակարար ՄԲ		1958715	1929906	
Վատ ՄՎ				1712502

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում
(Գրանցման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ- ԱՇՈՒՆ)

Ավտոմոբիլային կարգի (Շանկագիր)	Տարվա կտրվածքով (դրամ)				Թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Քակարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Քակարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	
Երաշխիքային ՀԵ	562221				
Լավ ՀԼ	1073952	997623			
Քակարար ՀԲ		1751409	1689039		
Վատ ՀԿ					1556577

Ավտոմանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքի գնագոյացում

Ավտոմանապարհների կարգերը	Տարվա կտրվածքով (դրամ)		
	Լավ սպասարկման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Միջին սպասարկման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	Բավարար սպասարկման մակարդակի դեպքում՝ 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոմանապարհներ	415206	402732	396198
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոմանապարհներ	313038	297891	289278
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոմանապարհներ	230769	179388	174636

Մետաղական արգելափակոցների պահպանման արժեքի գնագոյացում	
Սարածաշրջանի անվանումը	1000 զմ մետաղական արգելափակոցների պահպանման արժեքը
Աշտարակի տարածաշրջան	1362042

**ԳԼՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ**
Գարուն-ամառ-աշուն ժամանակահատվածի համար

Ավտոճնոսպորիների վիճակը և պահպանման մակարդակը	I տեխնիկական կարգ (<< հազար դրամ)	II-IV տեխնիկական կարգ (<< հազար դրամ)	II-IV տեխնիկական կարգ (<< հազար դրամ)
Գարուն-ամառ-աշուն ժամանակահատված			
Երաշխիքային-լավ	923,076	635,877	562,221
Լավ-լավ	1714,878	1231,362	1073,952
Լավ-միջին	1659,933	1176,714	997,623
Բավարար-միջին	2581,821	1958,715	1751,409
Բավարար-բավարար	2483,217	1929,906	1689,039
Վատ-թույլատրելի		1712,502	1556,577

1000 գծ,մ մետաղական արգելափակոցների պահպանման առավելագույն արժեքը	
Տարածաշրջանի անվանումը	<< հազար դրամ
Աշտարակի տարածաշրջան	1362,042


Ձմեռ ժամանակահատվածի համար

Տարածաշրջան	Միջախտական I տեխ.կարգ			Միջախտական II-IV տեխ.կարգ			Հանրապետական II-IV տեխ.կարգ		
	Լավ	Միջին	Բավարար	Լավ	Միջին	Բավարար	Լավ	Միջին	Բավարար
1 Աշտարակ	415,205	313,033	230,759	402,732	297,891	179,388	395,198	289,278	174,636
	Ճանապարհի պահպանման մակարդակ			Ճանապարհի պահպանման մակարդակ			Ճանապարհի պահպանման մակարդակ		

ՊԱՏՎՈՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
 ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
 ՀՀ կենտրոնական գանձապետարան


ՀՀ 900011012136
 ՀՎՀՀ 02815457



ԿԱՏԱՐՈՂ

«Քյավատ Սերվիս» ՍՊԸ
 ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
 ք. Գավառ, Ազատության 41/5
 «ԱՐՄՍ-ԿԻՄԸՆ-Կ» ՓԲԸ
 հ/հ 2500011209980100
 ՀՎՀՀ 08420926

Տնօրեն՝ Ա. Սարգսյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

			Աշխատանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, սյդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231176/91	Ճանապարհների պահպանման աշխատանքներ												27 994 798	27 994 798

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անհոսկան կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
 ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
 ՀՀ կենտրոնական զանձապետարան
 ՀՀ 900011012136
 ՀՎՀՀ 02815457
 գլխավոր քարտուղար
 Ա. Երիցյան



ԿԱՏԱՐՈՂ

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
 ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
 ք. Գավառ, Ազատության 41/5
 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
 h/h 2500011209980100
 ՀՎՀՀ 08420926
 Տնօրեն՝ Ա. Սարգսյան



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԻԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անունումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
զնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն